



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




03 AUG 2009

3518.

2381

3



203.5
Q-97 us

5/03 837
3518-138 ✓

Ս. ԷԶՄԻԱՇՆԻ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

1600

Ա Մ Ե Ա Կ Ը

17555

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարան-Բնակարան
Բ. Հ. ՄԱՐԿՈՍԻ ԲՆԿ.
2 Ղ. Ո. 1914
Библиот.-Читальн.
Бак. Арм. Чолов. О-ва

ԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Տպ. Ա. Մալխասյանցի  Տիպ. А. Малхасянца
1902

25 FEB 2013

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ


1902

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ ԿՈՆՍՏԱՆԻՆՈՍԻ

Հասցե: Կոնստանդնուպոլիս, Կոնստանդնուպոլիս, Կոնստանդնուպոլիս, Կոնստանդնուպոլիս



2072
41



«Էջ Միամ ինն ի Հօրե
Եւ յոյս փառաց ընդ նմա.
Հայնք հնկեցին
Սակդարամեքս սնդկոյոց»:

„Եկա՛յք շինեցուք
Սուրբ զխոտանն շուտոյ,
Քանզի իսնս ծագեաց մեզ
յոյս
Ի Հայաստան աշխարհի“:

* *



Ռաջիկայ 1903 թուականին
լրանում է 1600 տարին
այն օրից, երբ Ս. Եջմի-
ածնի Հաստատութեան
Հիմնաքարը դրուեց և
վերջնականօրէն փուլ ե-
կաւ Հեթանոսական Հըս-
կայական շէնքը: Վա-
ղուց արդէն բուն էին դրել այդ շէնքի մէջ
անտարբերութիւնը և գաղափարի շփոթու-
թիւնը, որոնք իբրև որդեր կրճում ու մաշում էին
նորա արմատները. վաղուց արդէն մոլորու-
թեան և տգիտութեան քողով ծածկուած և խո-

րին թմրութեան մէջ ընկղմուած էր Հայ ժողովուրդը, կրելով հոգևոր ստրկութեան լուծը. մի կենդանի և ստափեցուցիչ ձայն էր հարկաւոր, որ հնչէր խաւարի մէջ բնակածների ականջին և հրաւէր կարգար նոցա՝ լոյսի և հոգևոր ազատութեան մէջ մի նոր կեանք վարելու: Այդ ձայնը Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզչութեան հուժկու ձայնն էր, որ միանգամից ստիպեց իրեն հալածող թագաւորին հայ սշխարհի ժողովրդին հրաման տալ, հնազանդելու Քրիստոսի ծառայութեան:

Այսպիսով ինքն իրեն քայքայուած հեթանոսութիւնը, որ հաստատուած էր անհաւասարութեան և խտրութեան վերայ, ընկաւ և Քրիստոսի փրկարար վարդապետութիւնը հաստատուեց անդրդուելի և հաստարմատ հիմունքներ վրայ: Քրիստոնէութեան հանդէս գալով Հայաստանում սկիզբն առան նորանոր հաստատութիւններ. այդ հաստատութիւններից մէկը և գլխաւորն է Հայոց Կաթողիկէ մայր եկեղեցին, Ս. Էջմիածինը, որը իբրև մի նոր կենտրոն հաստատուեց Վաղարշապատում Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի գաղափարով:

Ս. Գրիգոր ծնաւ 257 թուականին Վաղարշապատ քաղաքում. նրա հայրն էր Անակ Պար-

թեւը, մայրը կոչուում էր Ոգուհի: Խոսրով Հայոց թագաւորի սպանութիւնից յետոյ, Եւթաղ անունով մէկը Հայոց վրէժխնդրութիւնից ազատեց Անակի երեք տարեկան որդուն իւր Սոփիա ստնտուի հետ և փախցրեց Կեսարիա: Այնտեղ Պարթև մանուկը մկրտուելով՝ անուանուեց Գրիգոր և սնուեց քրիստոնէական ոգով, ուսանելով յուճարէն և ասորերէն լեզուները, միանգամայն և կրօնի վերաբերեալ գիտութիւնները: Երբ որ չափահաս դարձաւ, ամուսնացաւ Պաւլիթ անունով յոյնի Մարիամ դստեր հետ, որից երկու զաւակ ունեցաւ, Վրթանէս և Արիստակէս: Երեք տարուց յետոյ, երկու ամուսինները փոխադարձ համաձայնութեամբ բաժանուեցին միմեանցից. Մարիամը փոքր որդու հետ կուսանոց մտաւ, իսկ Գրիգորը Վրթանէսին դայակներին յանձնելով՝ գնաց Տրդատ արքայորդու մօտ, որպէս զի հաւատարմութեամբ ծառայելով նորան՝ հօր չարագործութեան արատը սրբէ իւր վրայից:

Գեռ Հռոմում եղած ժամանակ Տրդատ չորգորում էր Գրիգորին քրիստոնէութիւնը թողնել. իսկ երբ Հայաստան եկաւ և Երկրայում Անահիտ գիցուհուն զոհ բերեց իւր հայրենի թագաւորութիւնը յաջողութեամբ վերադառնալու

Համար, հրամայեց Գրիգորին որ արքայական սեղանից ծաղկէ պսակներ առնէ և կանաչ ոստերի հետ Ոսկեմօր նուէր տանի: Գրիգոր յանձրն չառաւ թագաւորի կամքը կատարելու: Այն ժամանակ Տրդատ զանազան հնարներով աշխատեց նորա միտքը փոխել, բայց ոչինչ չօգնեց: Ս. Գրիգոր անդրդուելի մնաց թագաւորի քաղցրը խօսքերի, սպառնալիքների և մինչև անգամ տանջանքների առաջ: Բայց երբ Տրդատ լսեց, թէ Գրիգոր արքայասպան Անակի որդին է, այս բանի վերայ աւելի զայրանալով, հրամայեց տանել ձգել նորան Արտաշատի Խոր-Վիրապը, ուր Հայաստանի ապագայ Լուսաւորչին վիճակուած էր երկար տարիներ ողջ ու անվնաս մնալ. մի բարեպաշտ կին ամեն օր մի հաց էր ձգում այդ գբի մէջ և կերակրում էր նրան:

Տասն և չորս տարի էր անցել Ս. Գրիգորի Վիրապ ձգուած օրից, երբ մի խումբ կոյսեր Գայանէի առաջնորդութեամբ Հռոմից փախչելով եկան ապաւինեցան Հայաստան, բերելով իրանց հետ մի կայսերազն օրիորդ Լուսիսիմէ անունով, որին Դիոկղէտիանոս կայսրը կամենում էր իրան կին առնել: Տրդատը տեսնելով Լուսիսիմէի գեղեցկութիւնը ինքը կամեցաւ կին առնել և հրամայեց որ թագաւորավայել զգեստ-

ներ հագցնեն և պալատ տանեն: Կոյսը ընդդիմացաւ և քաշէքաշ բերուեց Տրդատի մօտ: Հըռիփսիմէն մի քանի ժամ Տրդատի հետ կրճուելուց յետոյ սենեակից դուրս փախաւ և իւր ընկերների բնակարանը եկաւ: Գահճները հասան նորա յետևից և նահատակեցին: Նորա հետ սպանուեցին 33 հօգի նորա ընկերներից: Սպանուեց և Գայանէն իւր երկու ընկերների հետ:

Այսքան անմեղների մահուան վրայ թագաւորի խիղճը սկսեց տանջել. մի տեսակ մեղամաղձութիւն եկաւ վերան և երբ մի անգամ որսի էր գնում, կառքից դուրս թռաւ և վայրի գազանների պէս թափառում էր անտառներում: Այդ միջոցին Տրդատի քոյրը, Խոսրովիդուխտ, երազ տեսաւ, որ միայն Գրիգորը կարող է բըժշկել թագաւորին այդ պատուհասից. բայց ո՞վ կհաւատար թէ այնքան տարի անցնելուց յետոյ նա կենդանի մնացած լինի Վիրապում: Երբ երազը կրկնուեց, Օտա Ամատունին ուղարկուեց Արտաշատ և Աստուծոյ նահատակը դուրս բերուեց այն մութ ու խոնաւ բնակարանից: Այս սքանչելիքը շուտով տարածուեց հայաց աշխարհի մէջ: Վաղարշապատի ճանապարհի վրայ Ս. Գրիգորի առաջ եկաւ ախտացեալ թագաւորը իւր

իշխանների հետ: Սուրբը ծունկ չողելով՝ աղօթեց նոցա համար և նոքա փոքր ինչ թեթևութիւն զգացին: Յետոյ Հռիփսիմեան կոյսերի նահատակութեան տեղը գալով, մարմինները ժողովեց, նոցա բնակած հնձանը տարաւ և իւրաքանչիւրին իւր պատառոտուն զգեստի մէջ պատելով այնտեղ տեղաւորեց: Այնտեղ հնձանի մէջ Լուսաւորիչը թագաւորին և հաւաքուած ժողովրդին սկսեց քարոզել խօսելով Աստուծոյ արարչագործութեան, Քրիստոսի մարդղեութեան և Եկեղեցու հաստատութեան վրայ (301):

Այս նախապատրաստութիւնից յետոյ, որ երկու ամիս տևեց, Ս. Գրիգորը նորահաւատ ժողովրդի օգնութեամբ ձեռք զարկեց երեք վկայարան շինելու Հռիփսիմէի, Գայանէի նահատակութեան և նոցա բնակած հնձանի տեղերը, որոնք յետոյ կոչուեցին Հռիփսիմէի, Գայանէի և Կողակաթի վանքեր: Վկայարանները շինելուց և կոյսերի մարմինները նոցա մէջ ամփոփելուց յետոյ, հասարակած մաղթանքներ կատարուեցին. յետոյ նա պարսպով պատեց այն տեղը որ հրաշալի տեսիլքով ցոյց տուեց նորան հրեշտակը: Այնուհետև Տրդատ Ս. Գրիգորի հետ սկսեց շրջել Հայաստանի ամեն կողմերը, ուր նոր կրօնի համբաւը նորանից առաջ էր հասել: Կոր-

ճանուեցին և այրուեցին աստուածների մեհեանները, բազիններն ու արձանները:

Վաղարշապատ վերագառնալով, թագաւորը հասարակած հաւանութեամբ որոշեց Ս. Գրիգորին Հայոց աշխարհի ընդհանուր հովիւ կարգել: Տասն և վեց երևելի նախարարների յանձնուեց Լուսաւորչին արքունի հրովարտակով տանել Կեսարիա, ուր Ղևոնդ միտրոպոլիտը իւր ձեռքի տակ եղած եպիսկոպոսներով ձեռնադրեց նորան եպիսկոպոսապետ Հայոց (302): Կեսարիայից վերագառնալու լուրը հասածին պէս՝ Տրդատ թագաւորը իւր ընտանիքով և զօրքով գնաց Բագրևանդի Բագաւան քաղաքը նորան դիմաւորելու: Այնտեղ մի ամիս ժողովրդին պատրաստելուց յետոյ, Լուսաւորիչ հետը բերած քահանաների գործակցութեամբ մկրտեց և հաղորդեց թագաւորին իւր ընտանիքով, զօրքին և բոլոր բազմութեանը: Այստեղից Ս. Գրիգոր թագաւորի, նախարարների և մկրտուած բազմութեան հետ վերագառնալով Վաղարշապատ, սկսում է եկեղեցու վերահաստատութեան գործը, հիմնելով կաթողիկէ մայր եկեղեցին—Ս. Էջմիածինը 303 թուին: Ուրեմն Ս. Էջմիածնի շինութիւնից մինչև այսօր անցել է 1600 տարի:

Գրիգոր Լուսաւորչից յետոյ պահպանուեց

այն կարգը, որ տեղի ունեցաւ Լուսաւորչի ընտ-
րութեան ժամանակ, այն է հայրապետները ընտ-
րուած էին եկեղեցական և աշխարհական դասի
հաւանութեամբ և ձեռնադրուած էին Կեսա-
րիայում:

Մեծն Ներսէս 366 թուին ժողով գումարեց
թագաւորի, նախարարների և եկեղեցականների
մասնակցութեամբ և այդ ժողովի մէջ որոշուեց
դադարեցնել Կեսարիայում ձեռնադրութեան
կարգը և հաստատել Հայաստանում ինքնուրույն
անկախ աթոռ և հայ եպիսկոպոսների ձեռքով
ձեռնադրել ընդհանուր հայրապետները. այդ կար-
գը ընդունուեց և շարունակուած է մինչև այսօր:

Քաղաքական կեանքի հետ սերտ կապ ու-
նէր հայրապետական իշխանութեան զարգացու-
մը և անկումը: Արդէն 4-րդ դարու վերջերում
հայոց քաղաքական զօրութիւնը թուլացաւ. թա-
գաւորութիւնը բաժանուեց երկու մասի, արևե-
լեան մասը պարսից, արևմտեանը յունաց հովա-
նաւորութեան տակ ընկաւ: Չնայելով այդ քա-
ղաքական բաժանմանը, հայրապետութիւնը մը-
նաց միևնույն կենտրոնում—Վաղարշապատում:
Բայց 453 թուին Ս. Յովսէփի տարադրութիւ-
նից յետոյ նորա կանխագոյն հաճութեամբ Դը-
ուին մարզպանական քաղաքում ժողով գումար-

ուեց, հայրապետ ընտրուեց Մելիտէ Մանազ-
կերտցին և հայրապետական աթոռը Վաղարշա-
պատից փոխադրուեց Դուին:

Դուին փոխադրուելով, հայրապետական ա-
թոռը դարձեալ չկարողացաւ ցանկալի անդոր-
րութիւնը վայելել: Մի կողմից յոյները, միևս
կողմից արաբները անդադար աշխատում էին
հայոց ազգն ու եկեղեցին ստրկաբար հպատակե-
ցնել և քաղաքական ազատութեան հետ հոգե-
ւոր ազատութիւնն ևս վերացնել:

Եզրի կաթողիկոսութեան ժամանակ, արաբ-
ները Տարօնի վերայ արշաւելուց յետոյ արշա-
ւանք են գործում Դուին, որտեղ էր կաթողի-
կոսական աթոռը. 12,000 մարդ սպանելուց յե-
տոյ, 35,000 գերիներով էլ դառնում են Արա-
բիա: Աւելի սաստիկ հալածանքների ենթարկ-
ւում է հայրապետական աթոռը Եզիտ ոստիկա-
նի ժամանակ: Կաթողիկոսական աթոռը Դուի-
նից ժամանակաւորապէս փոխադրուած է Աղ-
թամար, և ապա 993 թուին Անի: Քանի դեռ
կանգուն էր Բագրատունեաց թագաւորութիւնը
կաթողիկոսները նստում էին Անիում: Բագրա-
տունեաց հարստութեան վերջնալուց յետոյ,
ազգային գաղթականութեան հետ հայրապետա-
կան աթոռը փոխադրուեց Կիլիկիա:

Ազգային կեանքի այս նոր յեղաշրջումից Կի-
լիկիան պատմական նոր կերպարանք ստացաւ հայ
ազգի նըկատմամբ, այսինքն մի կողմից այնտեղ
կանգնեց Ռուբինեաց իշխանական հարստութիւնը
և միւս կողմից վտանգի ենթարկուած և լեռնե-
րում ապաստանած կաթողիկոսական աթոռը հաս-
տատութիւն գտաւ: Հայրապետական աթոռը փո-
խադրուելով Կիլիկիա դարձեալ չկարողացաւ ան-
դորրութիւն վայելել. հարստահարութիւններն
ու բռնութիւնները աւելի սաստկացան թաթար
խաների և եգիպտական սուլթանների կողմից: Ե-
գիպտոսի Աշրաֆ բռնակալը ամբողջ Կիլիկիան ա-
րիւնով հեղեղեց, գրաւեց Հռոմկլայի ամրոցը, աւե-
րեց կաթողիկոսարանը, կողոպտեց եկեղեցու սպաս-
ները, որոնց թուում էր Ս. Լուսաւորչի աջը (որը
յետոյ վերագարձրեց) Կաթողիկոսը միւս գերեալ-
ների հետ տարուեց Եգիպտոս, ուր և վախճանուեց:

Քրիզոր Անաուարղեցու օրով Հռոմկլայի աւեր-
ման պատճառով աթոռը փոխադրուեց Սիս:

Ռուբինեաց թագաւորութեան անկումից յե-
տոյ, հայոց կաթողիկոսները շարունակեցին նըս-
տել Սսում մինչև 15-րդ դարու կէսերը, այդ
միջոցին Կիլիկիան հետզհետէ հայ ժողովրդից
դատարկուելով և կաթողիկոսները անտանելի
հարստահարութիւններից նեղուելով, Սսի աթոռը

յետին աստիճանի աղքատութեան էր հասել. կա-
թողիկոսները շատ անգամ աստանդական թա-
փառում էին, և միայն ձեռնադրութեան և միւ-
ռոսի օրհնութեան համար էին երեւում կիսաւէր
կոթողիկոսարանում, հայրապետների ընտրու-
թիւնը հեռաւորութեան և յարաբերութիւնների
ընդհատման պատճառով՝ առանց ազգի հաւանու-
թեան էր լինում և Կիլիկիայի մէջ տեղ տեղ
ծիսական փոփոխութիւններ էին մտել: Այս ցա-
ւալի վիճակը տեսնելով ազգի և եկեղ. պատուին
նախանձախնդիր անձինք, մտածեցին հայրապե-
տական գահը վերստին իր բնավայրը՝ Ս. Եջմի-
ածին փոխադրել: Այս մտքով մի մեծ ժողով
գումարուեց Վաղարշապատում, որին չկամեցաւ
մասնակցել Սսի ժամանակի կաթողիկոսը Քրիզոր
Մուսաբէգեան, ուստի ժողովականները միաբե-
րան կաթողիկոս ընտրեցին Կիրակոս Վիրապե-
ցուն: Այսպիսով հայ ազգը երեք կաթողիկոսա-
կան աթոռ ունեցաւ Եջմիածին, Սիս և Աղթա-
մար, որոնք մինչև այժմ իրանց գոյութիւնը
պահպանում են: Բայ այս բաժանմամբ եկեղ.
միութիւնը չխանգարուեց այլ ազգը հաւատարիմ
մնաց իր մայրենի եկեղեցուն, Եջմիածինը ընդ-
հանուր հայրապետական գահ համարելով իսկ
Սիսն ու Աղթամարը մասնաւոր աթոռներ:

Սակայն ընդհանուր հայրապետութիւնը Էջմիածին փոխադրուելուց յետոյ էլ անկարող եղաւ իւր վայելուչ դիրքը պահելու: Մի կողմից այլազգի իշխանների հարստահարութիւնները և միւսից երկարատե պատերազմների աղէտները այն աստիճան թշուառութեան մէջ են գցում աթոռը, որ նորա գահակալներից ոմանք պարտատէրերից փախչում ու թաքչում էին և ոմանք անդուծ իշխողների տառապանքներից տանջւում ու մաշւում: Եկեղեցիներն ու վանքերը կողոպտուում, ամայանում և քրիստոնէական եկեղեցու սպասները ծախւում կամ գրաւ են դրւում Աթոռը պարտքից ազատելու համար: Կաթողիկոսները մի թեթևութիւն գտնելու յուսով աթոռակիցներ էին ընտրում իրանց, որով միւսնոյն ժամանակ երկու և երբեմն երեք կաթողիկոսներ էին նստում (Դաւիթ, Մելքիսեդէկ և Սրապիոն): Այս թշուառ վիճակը տևեց մինչև Մովսէս Գ. կաթողիկոսը (1629—1633) որ մեծ աշխատութեամբ ս. աթոռը պարտքից և տարեկան հարկից ազատեց և ասպիսով միջոց տուեց իրան յաջորդ Փիլիպպոս Աղբակեցուն (1633—1655) հայրապետական պարտաւորութիւնները կտրաբելու: Էջմիածինը և ուրիշ վանքեր նորոգելուց յետոյ Փիլիպպոս Մայր Աթոռում մի ուսումնարան հիմնեց բարեկերթ եկեղեցականներ պատ-

րաստելու համար: Այնուհետև ուղևորուեց Երուսաղէմ, ուր Սոսի կաթողիկոսի և Երուսաղէմի պատրիարքի խորհրդակցութեամբ ժողով կազմեց և Էջմիածնի ու Սոսի կաթողիկոսների յարաբերութիւնները որոշեց: Այնտեղից գնաց Կոստանդնուպոլիս, ուր պատրիարքական իշխանութեան պատճառով ժողովուրդը գժտութեան մէջ էր. այս խռովութիւնները իւր բարձր հեղինակութեամբ հանդարտեցրեց և նոր պատրիարք կարգելով՝ վերադարձաւ իւր աթոռը: Այսպիսով երկար դարերից յետոյ՝ Փիլիպպոս կաթողիկոսն եղաւ որ առաջին անգամ Էջմիածնի և ցրուեալ հայ ազգի մէջ բարոյական կապը նորոգեց:

Այնուհետև մի շարք պատերազմներից յետոյ Հայաստանի մի մասը վերջնականօրէն անցաւ Ռուսաց տիրապետութեան ներքոյ:

Ռուսաստանը Հայաստանի մի նշանաւոր մասին տիրելուց յետոյ, որի մէջ գտնուում էր Էջմիածնի Մայր Աթոռը, հարկաւոր համարեց Ռուսահայոց եկեղեցական վարչութեան համար առանձին կանոններ սահմանել, որով որոշուէին Հայոց եկեղեցու իրաւունքները և նորա յարաբերութիւնները կայսերական կառավարութեան հետ: Այս մտքով Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսի օրով խմբագրուեց մի կանոնադրութիւն,

2072
111



որ յայտնի է Պօլօժենիա ռուս անուամբ և
 կայսերական ստորագրութեամբ վաւերացուեց
 1836 թուին: Այս կանոնադրութեան զօրու-
 թեամբ Հայոց եկեղեցու գերագոյն տեսչութիւ-
 թիւնը և եկեղեցական կանոնների ու ծէսերի
 անթերի կատարման հսկողութիւնը վերապահ-
 ուած է Ս. Էջմիածնի Կաթողիկոսին, որ իբրև
 ընդհանրական հայրապետ Հայոց, ընտրուած է
 Մայր Աթոռի տաճարում ամբողջ Հայ ազգից
 ուղարկուած եկեղեցական և աշխարհական պատ-
 գամաւորների ձեռքով և հաստատուած է Ռու-
 սաց կայսեր հրովարտակով:



Ս. Մ Ի Ի Ռ Ո Ն Ի

Օ Ր Հ Ն Ո Ի Թ Ե Ա Ն

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ



Տ. Տ. Մկրտչի Ա.

Կարգիկու Սանճայն Հայոց



Ս. ՄԻՒՌՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ



ուրբ Միւռոնի օրհնութեան մեծ հանդէսը, ոչ միայն հոգեւոր, այլև ժողովրդական—ազգային բարձալի մի ուրախութիւն է և ամեն հայի համար մի վսեմ, խորհրդաւոր նշանակութիւն ունի: Ս.

Միւռոնի օրհնութիւնը որ միմիայն Ս. Էջմիածնի հայրապետական դահլի իրաւունքն է, ամենայն բաժանմանց առաջն է առնում. դա է որ ամեն տեղի հայերին կապում է ի մի և ամենքի աչքը ուղղել է տալիս դէպի նուիրական Ս. Իջման տեղը: Իսկապէս Ս. Միւռոնի օրհնութեան համար որոշ ժամանակ չկայ նշանակուած. այդ հանդէ-



ալ պէտքէ կառարուի այն ժամանակ, երբ վի-
ճակներում և Մայր Աթոռում սպառուի Ս. Միւ-
ռոնի պաշարը:

Երբ հարկը պահանջում է միւռոնօրհնէք
կատարել, Ս. Էջմիածնի կողմից նախապէս մի
քանի ամիս առաջ հրաւեր է ուղարկուում ամե-
նայն թեմերի ուր որ հայեր կան և ծանուցա-
նելով նոցա ապագայ հանդիսի օրը՝ առաջար-
կուում է գալ և մխիթարուել այդ փառաւոր հան-
դիսի տեսնելովը: Եւ ահա մայր աթոռի հրաւե-
րը արձագանք է գտնում հեռաւոր հայերի սրբ-
տերում և ամեն տեղ խումբեր են ժողովուում,
ընկերութիւններ են կազմուում դէպի Ս. Էջմի-
ածին ճանապարհորդելու...

Հանդիսից քառասուն օր առաջ, Ս. Էջմի-
ածնի աւագ սեղանի վերայ դնում են մաքուր
ձէթով լի միւռոնի արծաթէ մեծ կաթսան և
ամեն օր դորա վերայ կարգում են նշանակած
աղօթքները: Միւռոնին ժամանակ Վեհափառի
ընտրած մի քանի եպիսկոպոսներ և վարդապետ-
ներ պատրաստում են ծաղիկների և բալասանի
(միւռոնի ծառ, նման է փշատի ծառին, բուս-
նում է Եգիպտոսում) այն հիւթը, որ օրհնու-
թեան ժամանակ պէտք է ածուի մեծ կաթսայի
մէջ: Միւռոնի օրհնութեան համար գործ են

ածում հետեւեալ նիւթերը, որոնց ամենաբարձր
կշիւը 120 դրամ է իսկ ամենափոքրը 5 դրամ:
Յոս, պաշաւան, հասպաշաւան, դարակֆուր,
ձարգ, պուրայ, դասապարիէ, սևպուր հեղի,
ֆապապիէ, պասպաւուրի, աւսէճ հեղի, սար-
ջիւ, խուկ, դրդիւսանէ բուխուր մարիւս,
հոռոս խուկ, որ է միշա, մարիւցի ծաղիկ,
Ֆլֆուր, կասյի սերեւ, ներկիզ, հասպաշաւ, նու-
ւայ, շասէն, սևպուր խաբայի, ձարի, սևի-
դաշապետս, միւսմիւսայլէ, զաֆրան, մարսա-
կուր, մահրայ, իխիւր մեֆէ, սոսիֆոնի, որ է
կիպետիս, սասիոն, զվարս, պասպուրիճ, մու-
նուրայ, յիւնուֆար, զակաֆի, մազդաւի, յոս
որ է ծխանելիք, պաշաւան, սևպար, մուշկ,
մարիւցի ծաղկի ջուր, վարդի ջուր:

Միւռոնօրհնէքի հանդէսը իսկապէս սկսում
է նախնթաց օրը երեկոյեան, երբ կաթողիկոսը
միաբանութիւնը հանդիսով գալիս են եկեղեցի
և կատարում են գիշերապաշտումը: Երեկոյեան
ժամերգութիւնը աւարտելուց լետոյ, առանձին
արարողութեամբ և աղօթքներ կարդալով եվ են
տալիս մեծ կաթսայի իւղը և միայն առաւօ-
տեան ժամերգութիւնից առաջ ծածկում են կաթ-
սայի խուփը և վերան ձգում քօղը:

Հետեւեալ օրը մօտ ժամը 10-ից սկսում է

Հանդէսը վեհարանից: Ահա երևում են մի ձեռք
 Համեստութեամբ կուրծքին դրած, միւս ձեռ-
 քին գաւազան՝ կարմիր զգեստ հագած կաթողի-
 կոսական շաթիրները: Սոցա ծանր քայլերին հետ-
 ևում են Գէորգեան ճեմարանի աշակերտները
 հոգևորական զգեստով: Յետոյ հանդիսաւոր ժա-
 մաշապիկներ հագած՝ երգիչների և դպիրների
 մի մեծ խումբ: Ապա մի քանի կարգ մոմակալ-
 ներ, որոնց ետևից գնում են տեղացի և ուխտ
 եկած քահանաներ. նոցա ետևից երկու դաս՝ ա-
 բեղաները և վարդապետները: Այդ շարքերի մէջ
 տեղը ընթանում են խաչվառները: Խաչվառնե-
 րի ետևից շարուած են մի կարգ վեց վարդա-
 պետներ՝ թագերը գլխին և սւազ սարկաւազ-
 ների զգեստով, որոնք բուրվառում են իրանց ե-
 տևից տարուած սրբութիւններին և հայրապետին:
 Տասն և երկու արքեպիսկոպոսներ և եպիսկո-
 պոսներ զգեստաւորուած և վեց վեց բաժան-
 ուած երկու դասի՝ բերում են հետևեալ սրբու-
 թիւնները: Մէկ կողմից Միւռոնակիր Աղաւնին,
 որի մէջ պահուած է հին Միւռոնը, նորա ետ-
 ևից Մատթէոս աւետարանչի մասունքը, յետոյ
 Յակովբ առաքեալի (Ալփեան) աջը, յետոյ Պետ-
 րոս առաքեալի մասունքը, Թոմա առաքեալի ա-
 ջը, և վերջապէս Ս. Գեղարզը: Միւս կողմից՝

առաջ աւետարանը, յետոյ Արիստակէս հայրա-
 պետի աջը, Յակովբ Մծբնայ հայրապետի աջը,
 Պետրոս Գետադարձ հայրապետի քառաթև խա-
 ջը, Ս. Լուսաւորչի աջը և վերջապէս այն մեծ
 ճաճանչաձև խաչը, որի մէջ ամփոփուած է Ս. Կե-
 նաց փայտը: Եպիսկոպոսների այդ երկու դասի
 մէջ գնում են դարձեալ մոմակալներ: Սոցա ետևից
 երկու վարդապետներ՝ բարձր բռնած հայրապե-
 տական խաչը և գաւազանը: Սոցա ետևից բերում
 են մի փառաւոր ամպհովանի, որի ներքոյ գտնու-
 ւում է զգեստաւորուած Վեհափառ կաթողիկոսը,
 ձեռքին խաչ ու գաւազան. երկու վարդապետներ
 բռնած են նորին Օձուլթեան շուրջառի քղանցք-
 ները, ետևից կանգնած է կաթողիկոսական գա-
 ւազանակիրը, իսկ Վեհափառի առաջը երկու ա-
 ւագ քահանաներ բերում են սպիտակ կերպասի
 վերայ ոսկեթել բանուած և ոսկեթել ծոպերով
 զարդարուած հայրապետական Քօղը չորս ան-
 կիւնից բռնած: Ամպհովանու չորս կողմը շար-
 ուած են քչոցակալները, իսկ ետևից խուռն բազ-
 մութիւն հայ ազգի և օտարազգի պատուաւոր
 անձանց: Մտնելով եկեղեցի՝ վեհափառը, եթէ
 ինքը չէ պատարագիչ (սովորաբար պատարագիչ
 լինում է եպիսկոպոսներից մէկը) կանգնում է
 իւր գահի մօտ և սկսում է պատարագը: Երբ


որ պատարագը հասնում է այնտեղը, երբ երգում են «Աղջոյն տուք միմեանց», դպիրները զեռ չպատասխանած «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», պատարագը ընդհատուում է և սկսում է Միւռոնօրհնութիւնը: Կաթողիկոսը և տասներկու եպիսկոպոսները սրբութիւնները ձեռքին քեմի վերայ կիսաշրջապատում են կաթսան և կարգում են պատշաճի աղօթքներ և աւետարաններ, երգում են ներսէս Ծնորհալու Միւռոնի օրհնութեան համար յօրինած «Որ յառաջագոյն յօրէնս» շարականը և գանձերն ու մեղեդիք: Ապա վեր են առնում կաթսայից քօղը և խուփը և կաթողիկոսը ածում է կաթսայի մէջ նախ վերեն յիշուած նիւթերից պատրաստուած հիւթը, ապա հին միւռոնը: Հարկաւոր է այտեղ յիշել, որ ազաւնու ձև ոսկէ անօթի մէջ միշտ պահուում է անցեալում օրհնուած Միւռոնը, որ իբրև խմոր, ածուելով նոր օրհնելիքի մէջ, նորից յետոյ լցում է և պահուում եկող միւռոնօրհնէքի համար: Եւ այսպէս, ըստ ազգային աւանդութեան, պահուած է մինչև այսօր Ս. Լուսաւորչի ձեռքով օրհնած Միւռոնի խմորը: Հին Միւռոնը ածելուց յետոյ՝ կաթողիկոսը խաչաձև խառնում է կաթսայի հիւթը նախ Ս. Լուսաւորչի աջով, որի վերայ եպիսկոպոսական իրա-


ւունք կրող մատանի կայ, ապա նոյն ձևով խառնում է խաչափայտով և յետոյ Գեղարդով: Այդ սրբութիւններով կաթսայի խառնելու ժամանակ՝ միջի հիւթը եռ է գալիս և գուրըշի է արձակում:

Միւռոնի օրհնութիւնը սովորաբար տևում է երկու կամ երկու ու կէս ժամ, ապա շարունակում է պատարագը, որի վերջանալուց յետոյ, առանց առաջուայ հանդիսի, վերադառնում է Վեհափառը օրհնելով ճանապարհին իւր բարեպաշտ հօտը: Պատարագից յետոյ, ժողովուրդը դիմում է համբուրելու Միւռոնի լի կաթսան և պարտք է համարում ձեռքով շփել նախ տաք անօթին յետոյ իրանց ճակատին:

Գրքոյկը կազմելիս օգտուել ենք հետեւեալ աղբիւրներից. 1) Եկեղեցական պատմութիւններ՝ Մ. եպիս. Մուրադեանի, Յուսիկ վար. Մովսիսեանի, 2) Ձամբա, 3) Հայոց պատմութիւն Պալասանեանի, 4) «Արարատ» ամսագիր, և «Արձազանք»:







« Ազգային գրադարան



NL0157415

2381

203.5

2h-97